ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Ծաղկաբեր համայնքի ավագանու արտահերթ նիստի և համայնքային նշանակության միջոցառումների (ՏԻՄ-երի ասուլիսների, հանրային քննարկումների) վերաբերյալ

Համայնք	Միջոցառման անվանումը	Օրը	Ժամը	Անցկացման վայրը
Ծաղկաբեր	Ավագանու արտահերթ նիստ	18.11.2021թ	11.00	Ծաղկաբերի համայնքապետարան (գ. Ծաղկաբեր, 2 փողոց, 12 շենք)

Նախագիծ

Ծաղկաբեր համայնքի ավագանու 2021թ.
նոյեմբերի 18-ի արտահերթ նիստի օրակարգը
հաստատելու մասին

Ղեկավարելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ Օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Ծաղկաբեր համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Ծաղկաբեր համայքի ավագանու 2021թվականի նոյեմբերի 18-ի արտահերթ նիստի օրակարգը

Օրակարգ

1. Ծաղկաբեր համայնքի 2021թվականի բյուջեի փոփոխությունը հաստատելու մասին
2. Ծաղկաբեր համայնքի բյուջեից սոցիալական օգնություն տրամադրելու մասին:

Ձեկ. Հ. Հովհաննիսյան

Որոշման նախագիծ

ԾԱՂԿԱԲԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«18» նոյեմբերի 2021 թվականի

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և « ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով

Ծաղկաբեր համայնքի ավագանին որոշում է.

1. Ծաղկաբեր համայնքի 2021 թվականի վարչական բյուջեի տնտ. դասակարգումում գումարային փոփոխություն կատարել, չխախտելով նախահաշիվների ընդհանուր թվերը:
01.01.01.51 տնտ.դասակարգման 4221 հոդվածից 300.0 դրամ տեղափոխել նույն դասակարգման 4212 հոդվածին, 4217 հոդվածից 56.0 դրամ 4269 հոդվածին, 24.0 դրամ 4261 հոդվածին, 4235 հոդվածից 100.0 դրամ 4264 հոդվածին:
05.02.01.55 տնտ.դասակարգման 4251 հոդվածից 300.0 դրամ 01.01.01.51 տնտ.դասակարգման 4251 հոդվածին:

Որոշման նախագիծ

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«18» նոյեմբերի 2021թ.

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասին, համայնքի ավագանու 2017 թվականի հունիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ծաղկաբեր համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 14-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Ծաղկաբեր համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.
2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից: